*«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից*

# «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի շրջանակներում ենթադրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրավասու մարմիններին ՔՀԿ-ների կողմից 2026-2028թթ. ՄԺԾԾ հայտերի և 2026թ. բյուջետային հայտերի վերաբերյալ ներկայացված առաջարկություններ և դիտարկումներ

Ապրիլ, 2025

# Բովանդակություն

**Ամփոփ տեղեկատվություն 2026-2028թթ. ՄԺԾԾ հայտերի և 2026թ. բյուջետային հայտի քննարկմանը «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի մասնակցության վերաբերյալ** ..... 3

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ..... 6

«Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ-ի կողմից արդարադատության ոլորտում տեղի ունեցած ՀՀ 2026-2028 թթ. ՄԺԾԾ հայտերի և 2026 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի հանրային քննարկումների ամփոփում և ներկայացված առաջարկությունները ..... 6

**ՀԱՎԵԼՎԱԾ 2.** ..... 20

«Մեդիան հանուն կրթության» ՀԿ-ի հանրակրթության ոլորտում ՀՀ 2026-2028 թթ. ՄԺԾԾ հայտերի և 2026 թվականի բյուջետային հայտերի վերաբերյալ ներկայացրած առաջարկությունները ..... 20

**ՀԱՎԵԼՎԱԾ 3.** ..... 35

«Լուսաստղ» ՀԿ-ի համընդհանուր ներառական կրթության ոլորտում ՀՀ 2026-2028 թթ. ՄԺԾԾ հայտերի և 2026 թվականի բյուջետային հայտերի վերաբերյալ ներկայացրած առաջարկությունները ..... 35

*«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից*

# Ամփոփ տեղեկատվություն 2026-2028թթ. ՄԺԾԾ հայտերի և 2026թ. բյուջետային հայտի քննարկմանը «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի մասնակցության վերաբերյալ

«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսավորմամբ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի, «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի և «Ագորա Սենթրլ Յուրոփ» ՀԿ-ի (Չեխիա) հետ համագործակցաբար:

«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) **իրականացման ժամանակահատվածն** է՝ 8 դեկտեմբեր 2022 թվականի դեկտեմբերի 8-ից մինչև 2026 թվականի դեկտեմբեր 7-ը:

Ծրագրի **նպատակն է**՝ նպաստել ՔՀԿ-ների կարողությունների զարգացմանը՝ նրանց տրամադրելով բյուջետային գործընթացների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն, հմտություններ, մարդկային և տեխնիկական ռեսուրսներ, ինչպես նաև բյուջետային քաղաքականությունների շուրջ բանավեճերում ներգրավվելու և ազդեցություն ունենալու գործիքներ:

Ծրագրի **թիրախային ոլորտներն են**՝ արդարադատությունը, կրթությունը, սոցիալական աջակցության ոլորտը և գյուղատնտեսությունը:

Ծրագրի իրականացման ներկա փուլում շահառու քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ-ներ) զգալի առաջընթաց են գրանցել՝ բյուջետային գործընթացում իրենց կարողությունների զարգացման առումով: Նրանք ստացել են համակողմանի կարողությունների զարգացման և մենթորական աջակցություն, որը նպաստել է պետական բյուջեի հայտերի վերլուծության, պետական ծախսերի մշտադիտարկման և գնահատման հմտությունների ձևավորմանը: Ավելին, ՔՀԿ-ները ձեռք են բերել իրենց անդամների և շահակիցների շահերի արդյունավետ պաշտպանության կարողություններ՝ կենտրոնանալով առանցքային ոլորտների վրա և իրականացնելով պետական բյուջեի կատարողականի համակարգված վերահսկողություն:

*«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից*

Ծրագրի դրական ազդեցությունն արդեն իսկ դրսևորվում է ՔՀԿ-ների աճող ներգրավվածությամբ 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի (ՄԺԾԾ) և 2026 թվականի բյուջետային հայտերի քննարկման գործընթացներում: Նրանք ակտիվորեն ներկայացրել են հիմնավորված դիտարկումներ և առաջարկություններ, որոնք էապես նպաստում են՝

1. Հանրային հաշվետվողականության մեխանիզմների կատարելագործմանը,
2. Բյուջետային գործընթացի թափանցիկության էական բարելավմանը,
3. Բյուջետային գործընթացներում քաղաքացիների իրազեկվածության և մասնակցության մակարդակի բարձրացմանը:

Համաձայն ՀՀ վարչապետի 2025 թվականի հունվարի 16-ի թիվ 36-Ա որոշման, 2025 թվականի մարտ-ապրիլ ամիսներին մեկնարկեցին բյուջետային գլխավոր կարգադրիչների (ԲԳԿ) ՀՀ 2026–2028 թվականների ՄԺԾԾ և 2026 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի համակողմանի հանրային քննարկումները, որտեղ ակտիվ ներգրավվեցին Ծրագրի շահառու ՔՀԿ-ները և երիտասարդ մասնագետները:

Ըստ այդմ, Ծրագրի շրջանակներում 2025 թվականի ընթացքում շահառու ՔՀԿ-ները ցուցաբերել են նշանակալի ներգրավվածություն՝ մասնակցելով ինը առանցքային պետական մարմինների 2026-2028թթ. ՄԺԾԾ հայտերի և 2026թ. բյուջետային հայտի մանրակրկիտ քննարկումներին[1]: Արդյունքում՝ նրանք մշակել և ներկայացրել են հիմնավորված առաջարկություններ և դիտարկումներ: Բոլոր առաջարկություններն ու դիտարկումները փոխանցվել են համապատասխան իրավասու մարմիններին նաև գրավոր եղանակով:

Քննարկումներում ներգրավված պետական մարմիններն են՝

1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
2. ՀՀ արդարադատության նախարարություն
3. Բարձրագույն դատական խորհուրդ
4. Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ
5. ՀՀ վարչապետի աշխատակազմ
6. ՀՀ նախագահի աշխատակազմ
7. Հակակոռուպցիոն կոմիտե

[1] https://budgets.am/4939.html, https://budgets.am/4985.html

8. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
9. ՀՀ ֆինանսների նախարարություն
10. Սահմանադրական դատարան

Կից հավելվածներով ներկայացված են հետևյալ հասարակական կազմակերպությունների կողմից մշակված և առաջադրված առաջարկությունների ամփոփ վերլուծությունը.

- **Հավելված 1**. «Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ
- **Հավելված 2**. «Մեդիան հանուն կրթության» ՀԿ
- **Հավելված 3**. «Լուսաստղ» ՀԿ

*«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից*

ՀԱՎԵԼՎԱԾ 1.

**«Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ-ի կողմից արդարադատության ոլորտում տեղի ունեցած ՀՀ 2026-2028 թթ. ՄԺԾԾ հայտերի և 2026 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի հանրային քննարկումների ամփոփում և ներկայացված առաջարկությունները**

## I. Հանրային քննարկումների կազմակերպչական աշխատանքների մասին

1. ՀՀ վարչապետի 2025 թվականի հունվարի 16-ի թիվ 36-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) հավելվածի 20-րդ կետի համաձայն անցկացվել են բյուջետային գլխավոր կարգադրիչների (ԲԳԿ) ՀՀ 2026-2028 թվականների Միջնաժամկետ ծախսային ծրագրերի (այսուհետ՝ ՄԺԾԾ) և 2026 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի (այսուհետ՝ Հայտ) հանրային քննարկումները քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և քաղաքացիների հետ:

2. Այդ գործընթացի շրջանակներում «Տնտեսական իրավունքի կենտրոն» հասարակական կազմակերպության (ՏԻԿ ՀԿ) անդամները Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի շրջանակներում իրականացվող «Արդարադատության ոլորտի բյուջեի մոնիթորինգ և վերլուծության իրականացում» ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում ակտիվորեն մասնակցել է արդարադատության ոլորտի ԲԳԿ-ների հայտերի հանրային քննարկումներին:

3. ՏԻԿ ՀԿ ներկայացուցիչները մասնակցել են 10 ԲԳԿ-ների 2026-2028 թվականների ՄԺԾԾ և 2026 թվականի բյուջետային ֆինանսավորման Հայտերի հանրային քննարկումներին: Հանրային քննարկումների արդյունքները թույլ են տալիս կատարելու հետևյալ եզրակացությունները, կապված հանրային քննարկումների կազմակերպման վերաբերյալ.

1) Հանրային քննարկումները՝ ՀՀ վարչապետի որոշմամբ հաստատված բյուջետային գործընթացի իրականացման համար հաստատված ժամանակացույցի համաձայն սկսվում է պետական կառավարման մարմինների կողմից համապատասխան տարվա ՄԺԾԾ և բյուջեի նախնական հայտը ՖՆ ուղարկելուց հետո, ինչը հնարավորություն չի տալիս ՔՀԿ-ներին մասնակցելու բյուջետային հայտի մշակման գործընթացներին:

2) Հանրային քննարկումների համար նախատեսված ժամկետը բավականին կարճ է: Օրինակ, ՏԻԿ ՀԿ- ը ստիպված էր 10 աշխատանքային օրվա ընթացքում մասնակցել 10 ԲԳԿ-ների Հայտերի հանրային քննարկումներին: Նաև հարկ է նշել, որ ԲԳԿ-ները սահմանված ժամկետում չէին տեղադրել Հայտերը իրենց պաշտոնական կայքէջերում: ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաստատված ՀՀ 2026-2028 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի նախագծերի մշակման շրջանակներում պետական մարմինների բյուջետային ծրագրերի մշակման գործընթացին հանրային մասնակցության ապահովման մեթոդական ցուցումների համաձայն (այսուհետ՝ Մեթոդական ցուցումներ) հայտերը պետք է տեղադրվեին հանրային քննարկումից 15 օր առաջ: Օրինակ, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը և Բարձրագույն դատական խորհուրդը իրենց հայտարարությունները հանրային քննարկման մասին հրապարակել էին 2025թ. մարտի 14-ին և հանրային քննարկումը նշանակել էին մարտի 21-ին: **Այսինքն՝ տրամադրվել էր ընդամենը 7 օր ժամանակ՝ հայտերին ծանոթանալու, և առաջարկություններ մշակելու համար, որպեսզի նշանակված օրը շահագրգիռ ՔՀԿ-ները մասնակցեն 2 ԲԳԿ-ների հանրային քննարկումներին:**

3) Միաժամանակ, մի շարք ԲԳԿ-ներ իրենց հայտերի հանրային քննարկումներ էին նշանակել Մեթոդական ցուցումներով նախատեսված առաջարկությունների ներկայացման օրից՝ ապրիլի 10-ից, 2-3 օր առաջ, **ինչը դժվարացնում էր ՔՀԿ-ների աշխատանքը առաջարկությունների ձևակերպման և ներկայացման գործում:** Կամ՝ որոշ ԲԳԿ-ներ իրենց հայտարարություններում **հղում էին տալիս այնպիսի էջերի, որոնցում հնարավոր չէր գտնել նրանց հայտերը (օրինակ՝ ԲԴԽ-ը):** Որոշ ԲԳԿ-ներ **ճկուն չէին և այլ հայտատուների բացակայության պարագայում մերժում էին տեղափոխել իրենց հայտի քննարկման ժամկետը՝ հաշվի առնելով Հայտերի քննարկման կազմակերպված այս սուղ ժամկետները:** Օրինակ՝ 2025թ. ապրիլի 4-ին ժամը 11:00-ին նախատեսված էր ՖՆ-ի հայտի քննարկումը, իսկ ժամը 12:00-ին՝ Քննչական կոմիտեի: ՏԻԿ ՀԿ-ի **խնդրանքը ՔԿ քննարկումը տեղափոխել ՖՆ քննարկումից հետո՝ ժամը 14:30-ին չբավարարվեց: Ավելին, ՔԿ-ն չեղարկեց նաև ապրիլի 10-ին նախատեսված հանդիպումը:** Դրան հակառակ, այս հարցում **բավականին ճկուն էին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, Հակակոռուպցիոն կոմիտեի, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի**

գործընկերները: Իսկ ՀՀ դատախազության հայտը հասանելի չէր պաշտոնական կայքէջում, առկա էր միայն Քաղաքացու բյուջեն:

4) ԲԳԿ-ների մեծ մասը իրենց Հայտերը տեղադրել էին ոչ ամբողջական՝ դրանց կազմման մասին Մեթոդական ցուցումներով նախատեսված ծավալին համապատասխան, կամ էլ տեղադրել էին հիմնականում PDF ձևաչափով, ինչը դժվար ընթեռնելի էր դարձնում հատկապես ծրագրային և արդյունքային ցուցանիշների մասին աղյուսակների (Doc-1, Doc-3) ընթերցումը: Մի շարք ԲԳԿ-ների Հայտերի մեջ Մեթոդական ցուցումներով սահմանված աղյուսակները լրացված էին ոչ ամբողջական, բացթողումներով:

5) Միաժամանակ խիստ խնդրահարույց ենք համարում **Մեթոդական ցուցումներով նախատեսված դիտողություն-առաջարկության ներկայացման ձևաչափը:** Դա խիստ ծավալուն ձևաչափ է յուրաքանչյուր դիտողություն-առաջարկության համար, որոնցով առաջարկվում էր լրամշակել հայտերի ռազմավարական մասերը, լավարկել ծրագրերի վերջնական արդյունքի, ծրագրային միջոցառումների ուղղակի ոչ ֆինանսական արդյունքի ցուցանիշները, ուղղել բացահայտված թվերի շեղումները և այլն: Օրինակ՝ ՏԻԿ ՀԿ-ը մշակել էր մի դիտողություն միայն ռազմավարական մասի վերաբերյալ, որը ինչը կազմեց 4 թերթ: **Կարծում ենք, որ այդ ձևաչափի նախատեսումը մեթոդական ցուցումներում սխալ է, քանի որ դա շատ ժամանակատար է, ռեսուրսատար և առաջարկություն ներկայացնողի համար ոչ մոտիվացնող:** Ձևաչափում կան շատ մանրամասն հարցեր և այնպիսի հարցադրումներ (**օրինակ՝ առաջարկություն ֆինանսական գնահատականի, ֆինանսավորման հնարավոր աղբյուրների մասին**), որոնց հաշվարկման համար անհրաժեշտ էր կատարել իսկայական տնտեսագիտական հաշվարկներ, ինչի համար ՔՀԿ-ները համապատասխան ռեսուրսներ չունեն: Առաջարկություն ներկայացնողը չունի յուրաքանչյուր առաջարկության համար ամբողջական պատասխաններ ներկայացնելու համապատասխան ռեսուրսներ, առավել ևս եթե հայտնի չէ, առաջարկությունները ընդունվելու են, թե՝ ոչ: **Կարծում ենք, որ այդ ձևաչափը կարելի է լրացնել միմիայն ընդունված առաջարկության համար՝ համապատասխան ֆինանսավորման դեպքում:**

6) Հաջորդ հիմնախնդիրը հանրային քննարկումներին տվյալ ԲԳԿ-ի քաղաքականություն իրականացնող ստորաբաժանումների ներկայացուցիչների

բացակայությունն էր: Այդ ԲԳԿ-ներում (ՀՀ վարչապետի աշխատակազմ, ԲԴԽ) հայտերի **հանրային քննարկումներին մասնակցում էին միայն ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման ստորաբաժանումների ներկայացուցիչները, ովքեր գործնականում պատասխանատու չէին պատասխանելու տվյալ ոլորտում վարվող քաղաքականությունների մասին հարցադրումներին:** Մեր խորին համոզմամբ ՄԺԾԾ և բյուջետային հայտերը **առաջին հերթին քաղաքական փաստաթղթեր են և հետո միայն՝ ֆինանսական:**

7) Հաջորդ հիմնախնդիրը հայտի ձևաչափերով նախատեսված նոր նախաձեռնություններին վերաբերելի բարդ, ծավալուն 3 ձևաչափերն են: Հանրային քննարկումների ժամանակ ԲԳԿ-ներն առաջարկեցին միավորել այդ ձևաչափերը մեկ ձևաչափում և ավելի պարզեցնել դրանք: Ավելի մանրամասն տեղեկատվությունը պահանջել բյուջեի նախագծի մշակման ժամանակ:
8) Հանրային քննարկումների ժամանակ հնչեցրած հաջորդ հիմնախնդիրը, վերաբերում է հայտի ծախսերի ըստ տնտեսագիտական և գործառական դասակարգման մասին առանձին աղյուսակների լրացման պահանջին: Որոշ ԲԳԿ-ներ առաջարկեցին դրանք ՄԺԾԾ հայտի պարագայում միավորել, քանզի դրանք տարվա բյուջետային հայտի կազմման ընթացքում արդեն իսկ մանրամասնորեն ներկայացվում են:
9) ՀՀ նախագահի, ՀՀ վարչապետի, ՀՀ Սահմանադրական դատարանի աշխատակազմերում անցկացված հանրային քննարկումները ցույց տվեցին, որ հայտերի կազմման մեթոդական ցուցումներով պահանջվող ձևաչափերը անհրաժեշտ չեն այնպիսի մարմինների համար, որոնք, ըստ էության քաղաքականություն չեն մշակում, ունեն մեկ բյուջետային ծրագիր՝ իր միջոցառումներով և նրանց բյուջետային հատկացումները տրվում են հիմնականում իրենց վերապահված գործառույթների իրականացման աշխատակազմի պահպանման ծախսերը հոգալու համար: Այդ մարմինների շարքում կարելի է թվել նաև ՀՀ հաշվեքննիչ պալատին, ՀՀ դատախազությանը և այլ համանման ինքնավար մարմիններին:

*«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից*

II. Հայտերի բովանդակության և որակական գնահատականի մասին

1. ՀՀ-ում մշակված գրեթե բոլոր հեռանկարային զարգացման ծրագրերի վերջնաժամկետը 2026 թվականն է: Չկան այդպիսի համապարփակ ռազմավարական ծրագրեր 2026թ-ից հետո ընկած ժամանակաշրջանի համար:

2. Այդ պարագայում գրեթե բոլոր ԲԳԿ-ների Հայտերի ռազմավարական մասում ամբողջովին ներկայացված չեն նրանց վերաբերելի ռազմավարական ծրագրերից բխող նպատակների ու միջազգային փաստաթղթերով ստանձնած հանձնառությունների կատարմանն ուղղված նպատակները, պարտավորությունները: Այսպես, հիմնականում գրեթե բոլոր ԲԳԿ-ների (առանձին բացառություններով) Հայտերի ռազմավարական մասերում չեն ներկայացվել հետևյալ ռազմավարական ծրագրերից և ՀՀ միջազգային հանձնառություններից բխող նպատակներ, ծրագրեր, ծառայություններ, վերջնական արդյունքի կատարողական ցուցանիշներ.

1) ՄԱԿ կողմից ընդունված «Ձևափոխելով մեր աշխարհը՝ Կայուն զարգացման 2030 օրակարգ» փաստաթղթի նպատակների մասով (17-րդ նպատակ՝ համագործակցություն ՔՀԿ-ների, ԶԼՄ-ների հետ),
2) «Կոռուպցիայի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիա,
3) «Կոռուպցիայի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայի 46-րդ հոդվածի 13-րդ կետով նախատեսված կենտրոնական մարմին նշանակելու մասին» N 726-Ա որոշմանը համապատասխան ՀՀ արդարադատության նախարարությանը՝ որպես «Կոռուպցիայի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայի 46-րդ հոդվածի 13-րդ կետով նախատեսված կենտրոնական մարմնին վերաբերելի դատական վարույթի ընթացքում և օրինական ուժի մեջ մտած դատավճիռների կատարմանն առնչվող գործերով բյուջետային ծրագրերի միջոցառումներ,
4) «Կոռուպցիայի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայի 46-րդ հոդվածի 13-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 51-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ. հուլիսի 17-ի ««Կոռուպցիայի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայի 46-րդ հոդվածի 13-րդ կետով նախատեսված

կենտրոնական մարմին նշանակելու մասին» N 726-Ա որոշմանը համապատասխան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությանը որպես «Կոռուպցիայի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայի 46-րդ հոդվածի 13-րդ կետով նախատեսված կենտրոնական մարմնին վերաբերելի մինչդատական վարույթում գտնվող գործերով բյուջետային ծրագրերի միջոցառումներ.

5) 2013թ. հոկտեմբերի 21-22 ն Հարավային, Արևելյան և Հարավարևելյան Ասիայի հակակոռուպցիոն պետական մարմինների և պլանավորման ազգային մարմինների բարձրաստիճան ներկայացուցիչների, ինչպես նաև ամբողջ աշխարհից հավաքված հակակոռուպցիոն ոլորտի փորձագետների կողմից ընդունված «Կուալա Լումպուրի հայտարարություն»,

6) <u>2017 թ. Նոյեմբերի 24-ն կնքված ԵՄ-Հայաստան համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի</u> (այսուհետ՝ ՀԸԳՀ) հանձնառություններ (ԵՄ օրենսդրությանը ՀՀ օրենսդրության մոտարկում, կոռուպցիայի ազդեցության գնահատման փորձաքննություններ, պայքար կոռուպցիայի դեմ, գնումների կազմակերպում, համագործակցություն ՔՀԿ-ների, ԶԼՄ-ների հետ և այլն),

7) «Հայաստանի Հանրապետության 2023-2026 թվականների հակակոռուպ-ցիոն ռազմավարություն» (այսուհետ՝ Ռազմավարություն),

8) «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարու-թյունից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիր» (այսուհետ՝ Գործողությունների ծրագիր) (միջոլորտային համագործակցություն),

9) «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարու-թյունից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի ֆինանսական գնահատական» (այսուհետ՝ Ֆինանսական գնահատական),

10) ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունից բխող գործողությունների ծրագիր,

*«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից*

11) և այլն:

3. 2019թ. համեմատ ՀՀ-ում կոռուպցիայի ընկալման համաթիվն անընդհատ հետ զարգացում է գրանցել և վերջին 3 տարիներին նվազել է՝ վերջին տարում ունենալով 47 միավոր: Այդ ցուցանիշի գծով ՀՀ-ն անընդհատ զիջում է իր դիրքերը և այժմ գտնվում է 63-64-րդ տեղերում: Միաժամանակ, Հայտերի մեծ մասում նշված է, որ ԲԳԿ-ները կարևորում են կոռուպցիոն երևույթների վերաբերյալ հասարակության մոտ համապատասխան իրավագիտակցության ձևավորման խնդիրները: Մինչդեռ նրանցից շատերի Հայտերում նախատեսված չեն համապատասխան ծրագրեր և ծրագրային միջոցառումներ՝ ուղղված կոռուպցիայի ընկալման համաթվի բարելավմանը:

4. Հանրային քննարկումները հնարավորություն տվեցին եզրակացնել, որ ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարի անարդյունավետության կարևորագույն խոչընդոտներից է կոռուպցիոն մարմինների տարանջատված և ոչ միասնական ուղղվածությամբ աշխատանքի կազմակերպումը: Կարծում ենք, որ ՀՀ հակակոռուպցիոն մարմինները պետք է գործեն միասնական կառույցի շրջանակներում, որտեղ կբացառվեն գերատեսչական շահերի բախումները, կմիավորվեն գերատեսչական շահերի սպասումները, և կիրականացվի միասնական նպատակային լուրջ պայքար կոռուպցիայի դեմ՝ ըստ ստանձնած միջազգային հանձնառությունների և երաշխավորությունների:

5. Հայտերի մեծամասնության մեջ չկային միջոլորտային համագործակցության քաղաքականության միջոցառումներ: Ըստ մեզ կարելի էր Հայտերում նախատեսել հակակոռուպցիոն մարմինների հետ ոլորտային համագործակցության քաղաքականության միջոցառում ՀՀ իրավական ակտերի ազդեցության գնահատման, կոռուպցիոն ռիսկերի գնահատման, իրավական կոլիզիաների ու օրենսդրական կոռուպցիոն սողանցքների բացահայտման ու շտկման, ԵՄ օրենսդրությանը ՀՀ օրենսդրությունը մոտարկելու փորձաքննությունների համատեղ անցկացման միջոցառումներ: Ըստ այդմ առաջարկում ենք ձեռնամուխ լինել համապատասխան բյուջետային ծրագրի կամ միջոցառման մշակմանը՝ արդյունքային ցուցանիշներով:

6. Համապատասխան ԲԳԿ-ների Հայտերում գրեթե բոլոր հակակոռուպցիոն մարմինները բացարձակապես անդրադարձ չեն կատարել Ազդարարիր, Հայտնիր և Բիզպաշտպան ազդարարման համակարգերի աշխատանքներին:

*«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից*

7. Համապատասխան ԲԳԿ-ների Հայտերում ոչ մի ծրագիր կամ ԾՄ չի նախատեսված բաց բյուջեի 2023թ. հետազոտության (ԲԲՀ) արդյունքներով Հայաստանին տրված հանձնառությունների կատարումն ապահովելու ուղղությամբ, ինչը հակասում է ՀՀ ԲԿԳ շրջանակներում ստանձնած պարտավորություններին:

8. Գրեթե բոլոր ԲԳԿ-ների Հայտերում չկան ՔՀԿ-ների, ԶԼՄ-ների հետ համագործակցությանը վերաբերելի Բյուջետային ծրագրեր և/կամ միջոցառումներ: Ըստ այդմ առաջարկում ենք ձեռնամուխ լինել ՀՀ կառավարություն-քաղաքացիական հասարակություն կառուցողական համագործակցության ռազմավարության մասնակցային մշակմանը, որին համապատասխան ՀՀ պետական բյուջեում կնախատեսվի նպատակային բյուջետային ծրագիր՝ համապատասխան միջոցառումներով, արդյունքային ցուցանիշներով:

9. Հանրային քննարկումների ժամանակ լուրջ ուշադրություն դարձվեց բյուջետային ծրագրերի վերջնական արդյունքների նկարագրության, միջոցառումների կատարողական արդյունքային ցուցանիշների որակի վրա: Քննարկումների ժամանակ ՏԻԿ ՀԿ-ի կողմից մտահոգություն հայտնվեց առ այն, որ շատ դեպքերում բյուջետային ծրագրերի վերջնական արդյունքների նկարագրությունները չեն բխում վերոհիշյալ ռազմավարական ծրագրերով նախատեսված նպատակներից և ՀՀ կողմից ստանձնած հանձնառություններից: Այդ պարագայում իրենց հերթին Ծրագրերի միջոցառումների արդյունքային ցուցանիշները շատ դեպքերում պատշաճ, արդիական, ամբողջական, օբյեկտիվ ու չափելի չեն, չունեն ճշգրիտ էկոնոմետրիկ գնահատականներ, չկա պատշաճ վիճակագրության դրանց վերաբերյալ արժանահավատ տեղեկատվություն հավաքագրելու վերաբերյալ, չկան դրանց վերաբերյալ բյուջետային ծրագրերի վերջնական շահառուներից արժանահավատ տեղեկատվություն հավաքագրելու մեխանիզմներ և այլն:

## III. Առաջարկություններ հանրային քննարկումների արդյունքներով

*Հանրային քննարկումների կազմակերպման մասով*

Հայտերի հանրային քննարկումների կազմակերպման գործում վերոհիշյալ բացթողումները խիստ դժվարացնում էին ՔՀԿ-ների ներկայացուցիչների աշխատանքը: Դեռ ավելին, դրանք կրկնակի դժվար են ՀՀ քաղաքացիների համար, ովքեր արհեստավարժ չեն այդպիսի փաստաթղթերը կարդալու, ընկալելու և վերլուծելու գործում:

Հետևապես առաջարկում ենք.

1. կատարել համապատասխան լրացումներ ամենամյա բյուջետային գործընթացը սկսելու մասին ՀՀ վարչապետի որոշման մեջ, մասնավորապես դրանում սահմանելով, որ.
   1) Հայտերի հանրային քննարկումների անցկացման ժամկետը երկարաձգել մինչև մեկ ամիս:
   2) ԲԳԿ-ները հանրային քննարկումների մասին հայտարարությունների ժամանակացույցը պետք է նախատեսեն այնպես, որ դրանց մասնակցելու ցանկություն և հետաքրքրություն հայտնած անձանց համար լրացուցիչ ծանրաբեռնվածություն և/կամ դժվարություն չլինի: Այդ գործում պետք է ցուցաբերվի ճկունություն՝ հնարավորություն տալով հանրային քննարկման մասնակիցներին հանդես գալու իրենց առաջարկություններով:
   3) Հանրային քննարկումներին պարտադիր կարգով պետք է մասնակցեն տվյալ ԲԳԿ քաղաքականությունը որոշող ստորաբաժանումների ներկայացուցիչները:
   4) ՔՀԿ-ների և քաղաքացիների առաջարկությունների ընդունման կամ մերժման մասին պարտադիր կերպով տեղեկացնել նրանց: Ստեղծել մեխանիզմներ՝ անհրաժեշտության դեպքում նրանց հետ լրացուցիչ քննարկումներ անցկացնելու համար:
2. Վերը նշված դիտարկումներին համապատասխան լրամշակել Մեթոդական ցուցումները:
3. Միավորել նոր նախաձեռնություններին վերաբերելի 3 ձևաչափերը մեկ ձևաչափում և ավելի պարզեցնել դրանք: Հետագայում ավելի մանրամասն տեղեկատվությունը պահանջել բյուջեի նախագծի մշակման ժամանակ:
4. ՄԺԾԾ Հայտերի ժամանակ բյուջետային ծախսերի ըստ տնտեսագիտական և գործառնական դասակարգման մասին առանձին աղյուսակները միավորել մեկ ձևաչափի մեջ:
5. Հայտերի կազմման մեթոդական ցուցումները բաժանել հետևյալ երկու տեսակի.
   - 1-ինը՝ ծրագրեր իրականացնող ԲԳԿ-ների համար՝ ներկայում գործող ցուցումներով:

*«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից*

- **2-րդը՝ այնպիսի ԲԳԿ-ների համար** (ՀՀ նախագահի, ՀՀ վարչապետի, ՀՀ Սահմանադրական դատարանի աշխատակազմերը, ՀՀ հաշվեքննիչ պալատ, ՀՀ դատախազություն և այլ համանման ինքնավար մարմիններ), **որոնք, ըստ էության, քաղաքականություն չեն** մշակում, ունեն մեկ բյուջետային ծրագիր՝ իր միջոցառումներով **և նրանց բյուջետային հատկացումները տրվում են հիմնականում աշխատակազմի պահպանման ծախսերը հոգալու համար՝ պարզեցված ձևաչափով:**

<u>*Հայտերի որակը բարելավելու մասով*</u>

1. Ինչպես նշվեց վերևում, ՀՀ-ում մշակված **զրեթե բոլոր հեռանկարային զարգացման ծրագրերի վերջնաժամկետը 2026 թվականն է: Չկան այդպիսի համապարփակ ռազմավարական ծրագրեր 2026թ-ից հետո ընկած ժամանակաշրջանի համար: Հետևաբար առաջարկում ենք.**
   1) **2025թ. մայիս ամսից** ձեռնամուխ լինել **«ՀՀ 2026-2040 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի» մասնակցային մշակմանը, որին ակտիվորեն կներգրավվեն քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները:**
   2) Մշակել **«ՀՀ կառավարություն-քաղաքացիական հասարակություն կառուցողական համագործակցության ռազմավարությունը»,** ինչպես նաև դրան համապատասխան ՀՀ **պետական բյուջեում նախատեսել նպատակային բյուջետային ծրագիր՝ ծրագրի համապատասխան միջոցառումներով, արդյունքային ցուցանիշներով:**
   3) Մշակել **«Պետական ֆինանսների կառավարման բարեփոխումների 2024-2028 թվականների ռազմավարությունը», որին համապատասխան պատշաճ ֆինանսավորման դեպքում կարող են մասնակցել մեր կազմակերպության փորձառու մասնագետները:**
   4) Մշակել **«Լոբբինգի մասին»** ՀՀ **օրենքի նախագիծը, որին համապատասխան պատշաճ ֆինանսավորման դեպքում կարող են մասնակցել նաև ՏԻԿ ՀԿ-ի փորձառու մասնագետները:**

*«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից*

5) Նախաձեռնել այն համապարփակ կամ ոլորտային ռազմավարական ծրագրերի մշակումը, որոնց կատարման ժամկետները լրանում են 2026 թվականին: Դրանցում նախատեսել նաև այնպիսի ռազմավարական նպատակներ, ծրագրեր և միջոցառումներ, որոնք ուղղված կլինեն ՀՀ կողմից ստանձնած միջազգային հանձնառությունների կատարմանը և միջազգային փաստաթղթերով նախատեսված նպատակների իրականացմանը:

2. Բոլոր ԲԳԿ-ների Հայտերի ռազմավարական մասերը լրամշակել իրենց վերաբերելի համապատասխան ռազմավարական փաստաթղթերին համահունչ:

3. Ներկայացված Հայտերում վերանայել բյուջետային ծրագրերի վերջնական արդյունքի նկարագրերը:

4. Ներկայացված Հայտերում լրամշակել բյուջետային ծրագրերի և միջոցառումների վերջնական և ուղղակի արդյունքային ցուցանիշները:

5. 2019թ. համեմատ ՀՀ-ում կոռուպցիայի ընկալման համաթիվն անընդհատ նվազել է և վերջին 3 տարիներին հետ զարգացում է ունեցել՝ կազմելով 47 միավոր, և այդ ցուցանիշի գծով ՀՀ-ն անընդհատ զիջում է իր դիրքերը և այժմ գտնվում է 63-64-րդ տեղերում: Ըստ այդմ առաջարկում ենք ձեռնամուխ լինել համապատասխան բյուջետային ծրագրի մշակմանը՝ վերջնական և ուղղակի արդյունքային ցուցանիշներով:

6. Առաջարկում ենք ձեռնամուխ լինել ՀՀ հակակոռուպցիոն մարմինների միավորմանը մեկ մարմնի ներքո, ինչը էապես կնպաստի կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը՝ ուղղված ՀՀ կողմից ստանձնած միջազգային հանձնառությունների և երաշխավորությունների կատարմանը:

7. Հայտերի մեծամասնության մեջ առկա չէին հակակոռուպցիոն մարմինների հետ միջոլորտային համագործակցության ծրագրային միջոցառումներ: Ըստ այդմ, առաջարկում ենք համապատասխան ԲԳԿ-ների Հայտերում նախատեսել համապատասխան միջոցառումներ՝ ուղղված ՀՀ իրավական ակտերի ազդեցության

գնահատմանը, կոռուպցիոն ռիսկերի գնահատմանը, իրավական կոլիզիաների ու օրենսդրական կոռուպցիոն սողանցքների բացահայտմանն ու շտկմանը, ԵՄ օրենսդրությանը ՀՀ հակակոռուպցիոն օրենսդրությունը մոտարկելու նպատակով փորձաքննությունների համատեղ անցկացմանը՝ համապատասխան արդյունքային ցուցանիշներով:

8. Հայտերում գրեթե բոլոր հակակոռուպցիոն մարմինները բացարձակապես անդրադարձ չեն կատարել Ազդարարիր, Հայտնիր և Բիզպաշտպան ազդարարման համակարգերի աշխատանքներին:

Ըստ այդմ, առաջարկում ենք ձեռնամուխ լինել համապատասխան ԾՄ մշակմանը՝ համապատասխան արդյունքային ցուցանիշներով:

9. Հայտերում որևէ ծրագիր կամ միջոցառում չի նախատեսում բաց բյուջեի 2023թ. հետազոտության (ԲԲՀ) արդյունքներով Հայաստանին տրված հանձնառությունների կատարումն ապահովելու ուղղությամբ, ինչը հակասում է ՀՀ ԲԿԳ շրջանակներում ստանձնած պարտավորություններին:

Ըստ այդմ, առաջարկում ենք համապատասխան ԲԳԿ-ների հայտերում.

1) լրացնել հատուկ ԾՄ՝ ուղղված 2023թ. հետազոտության (ԲԲՀ) արդյունքներով Հայաստանին տրված հանձնառությունների կատարման ապահովմանը:
2) Հայտի աղյուսակ 12-ում լրացնել ԲԲՀ արդյունքներով Հայաստանին տրված հանձնառությունների կատարման ուղղությամբ արդյունքային ցուցանիշներ:

10. Գրեթե բոլոր ԲԳԿ-ների Հայտերում բացակայում են ՔՀԿ-ների, ԶԼՄ-ների հետ համագործակցությանը վերաբերելի Բյուջետային ծրագրեր, քաղաքականության միջոցառումներ:

Ըստ այդմ, առաջարկում ենք ձեռնամուխ լինել «ՀՀ կառավարություն-քաղաքացիական հասարակություն կառուցողական համագործակցության ռազմավարության» մասնակցային մշակմանը, որին համապատասխան ՀՀ պետական բյուջեում կնախատեսվի նպատակային բյուջետային ծրագիր՝ համապատասխան միջոցառումներով, արդյունքային ցուցանիշներով:

*«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից*

11. ՀՀ վարչապետի աշխատակազմի բյուջետային հայտում նախատեսված է Հանրային խորհրդի աշխատանքի ֆինանսավորում: Այդ ԾՄ համար մշակված չեն ոչ ֆինանսական ցուցանիշներ, մինչդեռ, անհայտ է այդ մարմնի գործունեության արդյունավետությունը: Ավելին՝ նախատեսված է, որ այդ մարմինը պետք է իրականացնի նախորդ ժամանակաշրջանում կոռուպցիոն երևույթների մասին փաստահավաք աշխատանք, ինչն, ըստ մեզ, չի կարող իրականացնել անհրաժեշտ արհեստավարժությամբ: Հետևաբար առաջարկում ենք այդ գործառույթը հանել Հանրային խորհրդի իրավասությունների շրջանակից:

12. Առաջարկում ենք էականորեն բարելավել էլեկտրոնային դատավարության համակարգի զարգացման ուղղությամբ ծրագրերը և միջոցառումները, որոնց արդյունքում կլուծվեն այդ գործում իրական մարտահրավերները և վերջնականապես կվերացվեն դրանք:

13. Առաջարկվում է բարձրացնել դատական համակարգին հատկացվող բյուջետային միջոցների արդյունավետությունը: Այս նպատակով համապատասխան ԲԳԿ-ներին առաջարկվել են մշակել այնպիսի ցուցանիշներ, որոնցով կապահովվեն արդար դատաքննության, օրենքի առջև հավասարության, խտրականության բացառման ՀՀ քաղաքացիների սահմանադրական իրավունքների իրացումը և դատաքննությունները իրապես կիրականացվեն ողջամիտ ժամկետներում, չեն խախտվի վաղեմության ժամկետները, դատավարության մասնակիցների իրավունքները, չեն շռայլվի բյուջետային միջոցները և կապահովվի արդար դատաքննություն:

14. Բյուջետային ծրագրերի վերջնական արդյունքների նկարագրությունները չեն բխում ռազմավարական ծրագրերով նախատեսված նպատակներից և ՀՀ կողմից ստանձնած հանձնառություններից, միջոցառումների կատարողական ոչ ֆինանսական ցուցանիշները շատ դեպքերում պատշաճ, արդիական, ամբողջական, օբյեկտիվ ու չափելի չեն, չունեն ճշգրիտ էկոնոմետրիկ գնահատականներ, չկա պատշաճ վիճակագրություն, Ծրագրերի վերջնական շահառուներից արժանահավատ տեղեկատվություն չի հավաքագրում:

Առաջարկում ենք մշակել ու հաստատել կատարողական որակական ցուցանիշներ՝ ստեղծելով դրանց ճշգրիտ էկոնոմետրիկ բնութագրման և հատկապես դրանց մասին արժանահավատ ու ներկայացուցչական տեղեկատվության հավաքագրման գործող

ընթացակարգ, ինչպես նաև ծրագրի վերջնական շահառուներից տեղեկատվության հավաքագրման գործուն մեխանիզմներ:

Պետական կառավարման համակարգի մարմինների գործունեության և նրանց կողմից բյուջետային ծրագրերի իրականացման մասին պատշաճ, ամբողջական օբյեկտիվ ու չափելի կատարողական ցուցանիշների մշակումն ու դրանց հավաքագրումը խիստ կարևոր է վերահսկողության և հանրությանը իրազեկելու առումով: Այդ կապակցությամբ քննարկվեց նաև ՏԻԿ ՀԿ-ի առաջարկությունը՝ «ՄԺԾԾ և բյուջետային ծրագրերի կատարողական ցուցանիշների մոնիթորինգն ու վերահսկողությունը ՔՀԿ-ներին վերապահելու» արդեն իսկ մշակված ծրագրի իրականացման հարցը՝ ՀՀ պետական բյուջեի շրջանակներում: Այդ ծրագիրը նախորդիվ բազմիցս ներկայացվել է ՀՀ ԱԺ, ՀՀ կառավարություն ու ՀՀ ֆինանսների նախարարություն: Սակայն առ այսօր պատշաճ արձագանք դրան չկա: Հիմնական խնդիրը ֆինանսավորման մեջ է: Այդ խնդրով դիմել ենք նաև զարգացման գործընկերներին, սակայն նրանցից նույնպես արձագանք չենք ստացել: Այդ ծրագրի առաջընթացն ապահովելու նպատակով ՏԻԿ ՀԿ-ը մշակել է 2 փաստաթուղթ, որոնք կարելի է բյուջետային միջոցներով առաջ մղել: Դրանք են.

- «ՀՀ բյուջեների ոչ ֆինանսական ցուցանիշների մոնիթորինգը (մշտադիտարկումը) քաղաքացիական հասարակության կազմակերպություններին վերապահելու մասին հայեցակարգի» մշակում[2],
- «Աջակցություն ֆինանսական գրագիտության բարձրացմանը. բյուջետային ծրագրերի հասարակական մոնիթորինգի իրականացման համառոտ ուղեցույց ՔՀԿ-ների համար»[3]

[2] https://drive.google.com/file/d/1cwgmcTJePVLzaP3WpaCDs_pv4jV6UlJK/view
https://eaparmenianews.wordpress.com/2021/02/10/%d5%b0-%d5%a1-%d5%b5-%d5%a5-%d6%81-%d5%a1-%d5%af-%d5%a1-%d6%80-%d5%a3-%d5%b0%d5%b0-%d5%a2%d5%b5%d5%b8%d6%82%d5%bb%d5%a5%d5%b6%d5%a5%d6%80%d5%ab-%d5%b8%d5%b9-%d6%86%d5%ab%d5%b6%d5%a1%d5%b6%d5%bd/

[3] https://eap-csf.am/hy/cer-study-anp-wg2-arm/?fbclid=IwAR3Ki7B2yDTezwcOErwCBB7Il4Rgp7WclRjYFkU-axEh_ItVpNS3mHtQqgY

*«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից*

ՀԱՎԵԼՎԱԾ 2.

«Մեդիան հանուն կրթության» ՀԿ-ի հանրակրթության ոլորտում ՀՀ 2026-2028 թթ. ՄԺԾԾ հայտերի և 2026 թվականի բյուջետային հայտերի վերաբերյալ ներկայացրած առաջարկությունները

## N 1 ԱՌԱՋԱՐԿ / ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ
## ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՅՏԻ/ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| | |
|---|---|
| Կազմակերպության անվանումը՝ | «Մեդիան հանուն կրթության» ՀԿ |
| Հասցեն՝ | Երևան, Աճառյան 26/2 |
| Էլեկտրոնային փոստը՝ | mediaforeducation.ngo@gmail.com |
| /Հեռախոսահամարը՝ | +374 41122272 |
| Պետական մարմնի անվանումը՝ | ԿԳՄՍ նախարարություն |
| Ներկայացման ամսաթիվը՝ | 07.04.2025 |

| |
|---|
| 1. Շահառուների որ խմբի շահերն է ներկայացնում դիտողության/առաջարկի հեղինակ կազմակերպությունը՝ |
| Ուսուցիչներ, աշակերտներ, ծնողներ |
| 2. Ներկայացվածը հանդիսանում է արդյոք այլ ՔՀԿ-ների կամ կազմակերպությունների հետ համատեղ մշակված դիտողություն/առաջարկ: Եթե այո, ապա նշել այն կազմակերպությունները, որոնք մասնակցել են դրա մշակմանը: |
| «Մեդիան հանուն կրթության» ՀԿ |
| 3. Դիտողության/առաջարկի վերաբերյալ իրականացվել են արդյոք խորհրդակցություններ հիմնական շահառուների հետ՝ |
| Այո |
| 4. Կազմակերպությունը ենթադրում է արդյոք իր մասնակցությունը առաջարկվող ծրագրի/միջոցառման ֆինանսավորման, իրականացման կամ մոնիտորինգի գործընթացներում: Եթե այո, ապա նշել ենթադրվող մասնակցության ձևը *(լրացվում է միայն նոր նախաձեռնություն հանդիսացող առաջարկի դեպքում):* |
| Կազմակերպությունը ենթադրում է մասնակցություն իրականացման կամ մոնիտորինգի ձևաչափով |
| 5. Նշել այն ոլորտը, բյուջետային ծրագիրը և միջոցառումը, որին առնչվում է դիտողությունը/առաջարկությունը *(նոր նախաձեռնություն հանդիսացող առաջարկի դեպքում ծրագրի կամ միջոցառման դասիչները կարող են չլրացվել)*՝ |

*«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից*

| | |
|---|---|
| Ոլորտը՝ | Հանրակրթություն |
| Ծրագրի դասիչը և անվանումը՝ | 1146, հանրակրթության ծրագիր |
| Միջոցառման դասիչը և անվանումը՝ | 11017, Կրթական հաստատություններին ուսումնամեթոդական նյութերով ապահովում,<br>1104, Նորարարական մանկավարժական ծրագրերի իրականացում հանրակրթությունում<br>12012, «Տարվա լավագույնները» միջոցառման շրջանակում հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժներին պարգևատրում |

6. Նշել ներկայացված դիտողության/ առաջարկի բնույթը՝

Դիտողություն ☐ Առաջարկություն ☐ Նոր նախաձեռնություն ^

7. Նշել, թե ինչ հարցերի է անդրադառնում ներկայացված դիտողությունը/ առաջարկությունը *(կարելի է միաժամանակ նշել մի քանի տարբերակներ)*՝

| | | | |
|---|---|---|---|
| Նպատակներ | > | Ծառայության որակ | ☐ |
| Գերակայություններ | > | Ծառայության մատչելիություն | ☐ |
| Շահառուների շրջանակ | > | Ֆինանսական հաշվարկներ | ☐ |
| Սպառվող ռեսուրսներ | > | Արդյունքային ցուցանիշներ | ☐ |
| Իրականացման եղանակներ | ☐ | Վերջնական արդյունքներ | > |
| Նոր ծառայություններ | ☐ | Նոր տրանսֆորտներ | ☐ |
| Նոր կապիտալ ներդրումներ | ☐ | Արդյունավետություն | > |

Այլ՝ ______________________________

8. Ներկայացնել դիտողության/ առաջարկի բովանդակությունը *(100 բառի շրջանակներում)*՝

Նկատի ունենալով, որ 2026-2028 թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում կրթության ոլորտի ծախսային գերակայություններից է ուսումնական հաստատությունները որակյալ մանկավարժական համակազմով ապահովելը՝ մասնագիտական առաջխաղացման խրախուսումամբ և արձագանքելով նրանց կարիքներին, նաև՝ կրթության կազմակերպման և բովանդակային արդիականացումը, «Մեղիան հանուն կրթության» ՀԿ-ն առաջարկում է պետական բյուջեից ֆինանսական միջոցներ հատկացնել դպրոցներին ներքին ռեսուրսների ստեղծման համար:

| |
|---|
| Առնվազն և նախ՝ «Տարվա լավագույնները» մրցույթի շրջանակում հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժներին պարգևատրման համար տարեկան հատկացվող 11 մլն. դրամ բյուջետային ծախսն առավել նպատակահարմար է ուղղել կրթության բովանդակության ու որակի համար կարևոր ուղղությանը՝ խրախուսելով ուսուցիչների նախաձեռնողականությունն ու աշակերտների նկատմամբ անհատական մոտեցման ցուցաբերումը:<br><br>Առարկայագետները դասավանդման նպատակով ստեղծում են վարժություններ, որոնց կարիքը կա, քանի որ դասագրքերում դրանց անհրաժեշտ քանակը, հաճախ նաև որակը բավարար չեն թեմայի վերջնարդյունքների ապահովման համար: Ուսուցիչները ստիպված են լինում անձնական միջոցներով տպել այդ վարժությունները և բաժանել սովորողներին:<br><br>Առարկայական մեթոդմիավորումները կարող են ստեղծել առաջադրանքների ձեռնարկներ՝ աշխատանքային տետրեր, իսկ դպրոցը համապատասխան հատկացումների շնորհիվ հնարավորություն կունենա տպագրելու այդ ձեռնարկները սովորողների քանակին համապատասխան: Ձեռնարկներում ընդգրկված առաջադրանքները կազմված կլինեն ըստ մակարդակների, դա հնարավորություն կտա դասի ժամին իրականացնել տարբերակված ուսուցում: Հնարավորություն կընձեռվի նաև վերահսկելու յուրաքանչյուր սովորողի անհատական առաջընթացը: |
| 9. Ինչ օգուտներ են ակնկալվում առաջարկի իրականացման արդյունքում: Ինչպես է առաջարկի իրականացումն ազդելու թիրախային շահառուների, այդ թվում՝ մատուցվող ծառայությունների որակի վրա՝ |
| Պարզից բարդ սկզբունքով ստեղծված առաջադրանքների անհատական աշխատանքային տետրը հնարավորություն կտա նպաստել կրթության արդյունավետության բարձրացմանը, մասնավորապես՝ յուրաքանչյուր սովորողի դեպքում՝ սահուն անցում կատարել ուսումնական առարկայի մի թեմայից մյուսը՝ չընդհատելով ուսումնական ծրագրի շարունակականությունը:<br><br>Իսկ ուսուցչի համար փաստացի տեսանելի կլինի սովորողի անհատական առաջընթացը: |
| 10. Ինչ ժամանակահատվածում է նախատեսվում իրականացնել առաջարկը՝ |
| Սկսած 2026 թվականից |
| 11. Ընդհանուր գնահատականներով ինչ ռեսուրսներ (սարքավորումներ, աշխատաժամանակ, ֆինանսական միջոցներ և այլն) կպահանջվեն առաջարկի իրականացման համար՝ |

| # | Նկարագրություն | Գումար (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | | |
| 2 | | |
| … | | |
| | Ընդամենը՝ | |

| |
|---|
| 12. Առաջարկը ենթադրում է արդյոք պետական բյուջեից բացի ֆինանսավորման այլ աղբյուրների ներգրավում: Եթե այո, ապա ներկայացնել առաջարկի համաֆինանսավորման աղբյուրները, ուղղությունները և նախնական ֆինանսական գնահատականները: |
| «Տարվա լավագույնները» միջոցառման շրջանակում հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժներին պարգևատրման փոխարեն տարեկան 11 մլն. դրամ բյուջետային ծախսն ուղղել կրթության բովանդակության ու որակի համար կարևոր ուղղությանը՝ խրախուսելով ուսուցիչների նախաձեռնողականությունն ու աշակերտների նկատմամբ անհատական մոտեցման ցուցաբերումը: |

## N 2 ԱՌԱՋԱՐԿ / ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ
## ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՅՏԻ/ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| | |
|---|---|
| Կազմակերպության անվանումը՝ | «Մեդիան հանուն կրթության » ՀԿ |
| Հասցեն՝ | Երևան, Աճառյան 26/2, բն.11 |
| Էլեկտրոնային փոստը՝ | mediaforeducation.ngo@gmail.com |
| Հեռախոսահամարը՝ | +37441122272 |
| Պետական մարմնի անվանումը՝ | ԿԳՄՍՆ |
| Ներկայացման ամսաթիվը՝ | 07.04.2025 |

| |
|---|
| 1. Շահառուների որ խմբի շահերն է ներկայացնում դիտողության/առաջարկի հեղինակ կազմակերպությունը՝ |
| Առաջարկը վերաբերում է հատուկ կարիք ունեցող երեխաներին և նրանց հետ աշխատող մանկավարժներին |
| 2. Ներկայացվածը հանդիսանում է արդյոք այլ ՔՀԿ-ների կամ կազմակերպությունների հետ համատեղ մշակված դիտողություն/առաջարկ: Եթե այո, ապա նշել այն կազմակերպությունները, որոնք մասնակցել են դրա մշակմանը: |
| «Մեդիան հանուն կրթության » ՀԿ |
| 3. Դիտողության/առաջարկի վերաբերյալ իրականացվել են արդյոք խորհրդակցություններ հիմնական շահառուների հետ՝ |
| Խորհրդակցություններ իրականացվել են հիմնական շահառուների հետ |
| 4. Կազմակերպությունը ենթադրում է արդյոք իր մասնակցությունը առաջարկվող ծրագրի/միջոցառման ֆինանսավորման, իրականացման կամ մոնիտորինգի գործընթացներում: Եթե այո, ապա նշել ենթադրվող մասնակցության ձևը *(լրացվում է միայն նոր նախաձեռնություն հանդիսացող առաջարկի դեպքում):* |

*«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից*

Կազմակերպությունը ենթադրում է մասնակցություն մոնիտորինգի աշխատանքներին

**5. Նշել այն ոլորտը, բյուջետային ծրագիրը և միջոցառումը, որին առնչվում է դիտողությունը/առաջարկությունը** *(նոր նախաձեռնություն հանդիսացող առաջարկի դեպքում ծրագրի կամ միջոցառման դասիչները կարող են չլրացվել)*՝

| | |
|---|---|
| Ոլորտը՝ | Կրթություն |
| Ծրագրի դասիչը և անվանումը՝ | 1146, Հանրակրթության ծրագիր |
| Միջոցառման դասիչը և անվանումը՝ | 11004, Տարրական հատուկ հանրակրթություն<br>11006, Միջնակարգ հատուկ հանրակրթություն |

**6. Նշել ներկայացված դիտողության/ առաջարկի բնույթը՝**

Դիտողություն [ ] Առաջարկություն [>] Նոր նախաձեռնություն [ ]

**7. Նշել, թե ինչ հարցերի է անդրադառնում ներկայացված դիտողությունը/ առաջարկությունը** *(կարելի է միաժամանակ նշել մի քանի տարբերակներ)*՝

| | | | |
|---|---|---|---|
| Նպատակներ | [ ] | Ծառայության որակ | [>] |
| Գերակայություններ | [>] | Ծառայության մատչելիություն | [>] |
| Շահառուների շրջանակ | [ ] | Ֆինանսական հաշվարկներ | [ ] |
| Սպառվող ռեսուրսներ | [ ] | Արդյունքային ցուցանիշներ | [ ] |
| Իրականացման եղանակներ | [>] | Վերջնական արդյունքներ | [>] |
| Նոր ծառայություններ | [>] | Նոր տրանսֆորտներ | [ ] |
| Նոր կապիտալ ներդրումներ | [>] | Արդյունավետություն | [>] |

Այլ՝ ______________________

**8. Ներկայացնել դիտողության/ առաջարկի բովանդակությունը** *(100 բառի շրջանակներում)*՝

2026-2028 թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում կրթության ոլորտի ծախսային գերակայություններից է ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ համակարգի արդիականացումը: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ «Մեդիան հանուն կրթության» ՀԿ-ն առաջարկում է ՀՀ պետական բյուջետային միջոցներից նախատեսել ֆինանսական հատկացումներ՝ ըստ անհրաժեշտ ժամանակահատվածի՝ հանրակրթական դպրոցներում հատուկ կարիք ունեցող երեխաների, մասնավորապես՝

| |
|---|
| վարքային սուր խնդիրներ ունեցողների հետ աշխատելու մասնագիտական կարողություններ ունեցող մանկավարժների ներգրավման նպատակով: Բացի այդ, դպրոցներում ապահովել համապատասխան միջոցներ ունեցող առանձին դասարաններ՝ հատուկ կարիք ունեցող երեխաների համար անհատական ծրագրով աշխատելու համար: |
| 9. Ինչ օգուտներ են ակնկալվում առաջարկի իրականացման արդյունքում: Ինչպես է առաջարկի իրականացումն ազդելու թիրախային շահառուների, այդ թվում՝ մատուցվող ծառայությունների որակի վրա՝ |
| Հատուկ կարիք ունեցող երեխայի համար մշակված անհատական պլանը կյանքի կոչելու նպատակով կստեղծվեն անհրաժեշտ, ներկայում բացակայող պայմաններ:<br><br>Կստեղծվեն սոցիալիզացիայի բարենպաստ պայմաններ, հատուկ կարիք ունեցող երեխաները կստանան առավելագույն որակյալ կրթություն, կստեղծվեն պայմաններ ուսուցման գործընթացում առաջընթաց գրանցելու համար: |
| 10. Ինչ ժամանակահատվածում է նախատեսվում իրականացնել առաջարկը՝ |
| Սկսած 2026 թվականից |
| 11. Ընդհանուր գնահատականներով ինչ ռեսուրսներ (սարքավորումներ, աշխատաժամանակ, ֆինանսական միջոցներ և այլն) կպահանջվեն առաջարկի իրականացման համար՝ |

| # | Նկարագրություն | Գումար (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | | |
| 2 | | |
| … | | |
| | Ընդամենը՝ | |

| |
|---|
| 12. Առաջարկը ենթադրում է արդյոք պետական բյուջեից բացի ֆինանսավորման այլ աղբյուրների ներգրավում: Եթե այո, ապա ներկայացնել առաջարկի համաֆինանսավորման աղբյուրները, ուղղությունները և նախնական ֆինանսական գնահատականները: |
| |

## N 3 ԱՌԱՋԱՐԿ / ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ
## ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՅՏԻ/ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| | |
|---|---|
| Կազմակերպության անվանումը՝ | «Մեդիան հանուն կրթության» ՀԿ |
| Հասցեն՝ | Երևան, Աճառյան 26/2 |
| Էլեկտրոնային փոստը՝ | mediaforeducation.ngo@gmail.com |
| /Հեռախոսահամարը՝ | +374 41122272 |
| Պետական մարմնի անվանումը՝ | ԿԳՄՍ նախարարություն |
| Ներկայացման ամսաթիվը՝ | 07.04.2025 |

1. Շահառուների որ խմբի շահերն է ներկայացնում դիտողության/առաջարկի հեղինակ կազմակերպությունը՝

Ուսուցիչներ

2. Ներկայացվածը հանդիսանում է արդյոք այլ ՔՀԿ-ների կամ կազմակերպությունների հետ համատեղ մշակված դիտողություն/առաջարկ: Եթե այո, ապա նշել այն կազմակերպությունները, որոնք մասնակցել են դրա մշակմանը:

«Մեդիան հանուն կրթության » ՀԿ

3. Դիտողության/առաջարկի վերաբերյալ իրականացվել են արդյոք խորհրդակցություններ հիմնական շահառուների հետ՝

Դիտողությունը/առաջարկությունը բխում է շահառուների փորձառությունից

4. Կազմակերպությունը ենթադրում է արդյոք իր մասնակցությունը առաջարկվող ծրագրի/միջոցառման ֆինանսավորման, իրականացման կամ մոնիտորինգի գործընթացներում: Եթե այո, ապա նշել ենթադրվող մասնակցության ձևը *(լրացվում է միայն նոր նախաձեռնություն հանդիսացող առաջարկի դեպքում):*

Կազմակերպությունը ենթադրում է մասնակցություն իրականացման և մոնիտորինգի հարցում

5. Նշել այն ոլորտը, բյուջետային ծրագիրը և միջոցառումը, որին առնչվում է դիտողությունը/առաջարկությունը *(նոր նախաձեռնություն հանդիսացող առաջարկի դեպքում ծրագրի կամ միջոցառման դասիչները կարող են չլրացվել)*՝

| | |
|---|---|
| Ոլորտը՝ | Կրթություն |
| Ծրագրի դասիչը և անվանումը՝ | 1146, Հանրակրթության ծրագիր |
| Միջոցառման դասիչը և անվանումը՝ | 11025, Գնահատման և թեստավորման ծառայություններ |

6. Նշել ներկայացված դիտողության/ առաջարկի բնույթը՝

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Դիտողություն | > | Առաջարկություն | > | Նոր նախաձեռնություն | ☐ |

**7. Նշել, թե ինչ հարցերի է անդրադառնում ներկայացված դիտողությունը/ առաջարկությունը** *(կարելի է միաժամանակ նշել մի քանի տարբերակներ)*՝

| | | | |
|---|---|---|---|
| Նպատակներ | ☐ | Ծառայության որակ | > |
| Գերակայություններ | > | Ծառայության մատչելիություն | > |
| Շահառուների շրջանակ | ☐ | Ֆինանսական հաշվարկներ | ☐ |
| Սպառվող ռեսուրսներ | ☐ | Արդյունքային ցուցանիշներ | ☐ |
| Իրականացման եղանակներ | > | Վերջնական արդյունքներ | ☐ |
| Նոր ծառայություններ | > | Նոր տրանսֆորտներ | ☐ |
| Նոր կապիտալ ներդրումներ | > | Արդյունավետություն | > |

Այլ՝ ______________________________

**8. Ներկայացնել դիտողության/ առաջարկի բովանդակությունը** *(100 բառի շրջանակներում)*՝

Նկատի ունենալով, որ 2028 թ. սահմանված թիրախներից է մանկավարժների աշխատանքային առաջխաղացման, մասնագիտական շարունակական զարգացման և վարձատրության փոխկապակցված մեխանիզմի ներդրումը՝ «Մեղիան հանուն կրթության» ՀԿ-ն առաջարկում է հետևություններ անել ընդհուպ վարչապետին հասցեագրված ուսուցչի բողոքից և պետական բյուջեի միջոցներից հատկացնել առանձին ֆինանսավորում՝ ԿՏԱԿ-ին՝ էլեկտրոնային եղանակով կամավոր ատեստավորումը տեխնիկական անհրաժեշտ ծառայությունների ֆինանսավորման նպատակով:

Ըստ 27.01.2025թ.-ի ԿՏԱԿ տնօրենի գրավոր պատասխանի, «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին կամավոր ատեստավորման էլեկտրոնային թեստավորման համակարգի ստեղծման և գործարկման համար ՀՀ պետական բյուջեից ո՛չ 2024 թվականին, և ո՛չ էլ 2025 թվականին հավելյալ գումար չի տրամադրվել: ԿՏԱԿ-ը գործում է ԿԳՄՍՆ-ի հետ կնքված ամենամյա դրամաշնորհային պայմանագրի պայմանագրի շրջանակներում՝ «Կրթության ոլորտում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրում» բյուջետային ծրագրով նախատեսված միջոցների հաշվին:

Նկատի ունենալով էլեկտրոնային թեստավորման ժամանակ ի հայտ եկած խնդիրը, որի հիմքում, անշուշտ, նաև համապատասխան ֆինանսավորման բացակայությունն է՝ վերջնարդյունքի հստակ ամրագրման հետ միասին, «Մեդիան հանուն կրթության» ՀԿ-ն

<table>
<tr><td>առաջարկում է պետական բյուջեի առանձին տողով սահմանել հատուկ այդ նպատակի իրականացման համար անհրաժեշտ համապատասխան ծախսն, ըստ կարիքի:<br>Խնդրի նախապատմությունը այստեղ՝ https://mediaforedu.am/educational-development-national-center-promise/</td></tr>
<tr><td>9. Ինչ օգուտներ են ակնկալվում առաջարկի իրականացման արդյունքում: Ինչպես է առաջարկի իրականացումն ազդելու թիրախային շահառուների, այդ թվում՝ մատուցվող ծառայությունների որակի վրա՝</td></tr>
<tr><td>Առաջարկի իրականացման շնորհիվ պարզ կլինի, թե հատկապես ինչ վերջնարդյունք ու որակ է ակնկալվում էլեկտրոնային թեստավորումից: Դա էլ իր հերթին իրականացնողին «կստիպի» ստացած ֆինանսավորման դիմաց ապահովել որակ՝ ուսուցիչներին առավելագույնս զերծ պահելով հնարավոր այլ խնդիրներից:</td></tr>
<tr><td>10. Ինչ ժամանակահատվածում է նախատեսվում իրականացնել առաջարկը՝</td></tr>
<tr><td>Սկսած 2026 թվականից</td></tr>
<tr><td>11. Ընդհանուր գնահատականներով ինչ ռեսուրսներ (սարքավորումներ, աշխատաժամանակ, ֆինանսական միջոցներ և այլն) կպահանջվեն առաջարկի իրականացման համար՝</td></tr>
<tr><td>
<table>
<tr><th>#</th><th>Նկարագրություն</th><th>Գումար (ՀՀ դրամ)</th></tr>
<tr><td>1</td><td></td><td></td></tr>
<tr><td>2</td><td></td><td></td></tr>
<tr><td>…</td><td></td><td></td></tr>
<tr><td></td><td>Ընդամենը՝</td><td></td></tr>
</table>
</td></tr>
<tr><td>12. Առաջարկը ենթադրում է արդյոք պետական բյուջեից բացի ֆինանսավորման այլ աղբյուրների ներգրավում: Եթե այո, ապա ներկայացնել առաջարկի համաֆինանսավորման աղբյուրները, ուղղությունները և նախնական ֆինանսական գնահատականները:</td></tr>
<tr><td></td></tr>
</table>

## N 4 ԱՌԱՋԱՐԿ / ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ
## ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՅՏԻ/ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| | |
|---|---|
| Կազմակերպության անվանումը՝ | «Մեդիան հանուն կրթության» ՀԿ |
| Հասցեն՝ | Երևան, Աճառյան 26/2 |
| Էլեկտրոնային փոստը՝ | mediaforeducation.ngo@gmail.com |
| /Հեռախոսահամարը՝ | +374 41122272 |

| | |
|---|---|
| Պետական մարմնի անվանումը՝ | ԿԳՄՍ նախարարություն |
| Ներկայացման ամսաթիվը՝ | 07.04.2025 |

1. Շահառուների որ խմբի շահերն է ներկայացնում դիտողության/առաջարկի հեղինակ կազմակերպությունը՝

Սովորողները

2. Ներկայացվածը հանդիսանում է արդյոք այլ ՔՀԿ-ների կամ կազմակերպությունների հետ համատեղ մշակված դիտողություն/առաջարկ: Եթե այո, ապա նշել այն կազմակերպությունները, որոնք մասնակցել են դրա մշակմանը:

Այո, առաջարկը քննարկվել և ներկայացվում է «Մենք» կրթամշակութային ՀԿ համաձայնությամբ:

3. Դիտողության/առաջարկի վերաբերյալ իրականացվել են արդյոք խորհրդակցություններ հիմնական շահառուների հետ՝

Առաջարկը բխում է շահառու դպրոցներից ստացած ազդակներից

4. Կազմակերպությունը ենթադրում է արդյոք իր մասնակցությունը առաջարկվող ծրագրի/միջոցառման ֆինանսավորման, իրականացման կամ մոնիտորինգի գործընթացներում: Եթե այո, ապա նշել ենթադրվող մասնակցության ձևը *(լրացվում է միայն նոր նախաձեռնություն հանդիսացող առաջարկի դեպքում):*

Կազմակերպությունը ենթադրում է մասնակցություն իրականացման և մոնիտորինգի գործընթացում

5. Նշել այն ոլորտը, բյուջետային ծրագիրը և միջոցառումը, որին առնչվում է դիտողությունը/առաջարկությունը *(նոր նախաձեռնություն հանդիսացող առաջարկի դեպքում ծրագրի կամ միջոցառման դասիչները կարող են չլրացվել)*՝

| | |
|---|---|
| Ոլորտը՝ | Կրթություն |
| Ծրագրի դասիչը և անվանումը՝ | Հանրակրթության ծրագիր, 1146 |
| Միջոցառման դասիչը և անվանումը՝ | 11003- Միջնակարգ ընդհանուր հանրակրթություն |

| 6. Նշել ներկայացված դիտողության/ առաջարկի բնույթը՝ | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Դիտողություն | ☐ | Առաջարկություն | > | Նոր նախաձեռնություն | ☐ |

| 7. Նշել, թե ինչ հարցերի է անդրադառնում ներկայացված դիտողությունը/ առաջարկությունը *(կարելի է միաժամանակ նշել մի քանի տարբերակներ)՝* | | | |
|---|---|---|---|
| Նպատակներ | ☐ | Ծառայության որակ | ☐ |
| Գերակայություններ | ☐ | Ծառայության մատչելիություն | ☐ |
| Շահառուների շրջանակ | > | Ֆինանսական հաշվարկներ | ☐ |
| Սպառվող ռեսուրսներ | ☐ | Արդյունքային ցուցանիշներ | ☐ |
| Իրականացման եղանակներ | ☐ | Վերջնական արդյունքներ | ☐ |
| Նոր ծառայություններ | > | Նոր տրանսֆորտներ | ☐ |
| Նոր կապիտալ ներդրումներ | ☐ | Արդյունավետություն | ☐ |
| Այլ՝ ________________ | | | |

| 8. Ներկայացնել դիտողության/ առաջարկի բովանդակությունը *(100 բառի շրջանակներում)՝* |
|---|
| «Մեդիան հանուն կրթության» ՀԿ-ն առաջարկում է վերականգնել նախորդ տարիներին պետբյուջեով նախատեսված տարեկան առնվազն 7,7 մլն. դրամի ծախսը՝ ազգային երգ ու պար առարկայի ներդրման ուղղությամբ: Ըստ ԿԳՄՍ նախարարության գրավոր պատասխանի, 2021-2024 թվականներին առարկայի դասավանդման համար վերապատրաստվել է 260 ուսուցիչ (մոտ 1400 դպրոցի պարագայում): Հիմա այս առարկան ընդգրկված է արվեստներ և արհեստներ առարկայախմբի մեջ: Սակայն անհասկանալի է , թե ինչպե՞ս, ի՞նչ եղանակով կարող են երեխաները սովորել հայկական երգ ու պար թատրոնի, կերպարվեստի, դեկորատիվ արվեստի հետ միաժամանակ, ովքե՞ր են այդ մասնագետները, որ կարող են բոլոր արվեստները միաժամանակ դասավանդել:<br>Բացի այդ, ի՞նչ հիմնավորմամբ է որոշվել այս ծախսը ընդամենը մի քանի տարի նախատեսել՝ ապահովելով ակնհայտորեն ոչ բավարար ռեսուրսներ: Այս ծրագրի դադարեցումից հետո մարզերի դպրոցները դիմում են, օրինակ, «Մենք» կրթամշակութային ՀԿ-ին՝ խնդրելով ազգային պարի դասընթացներ կազմակերպել: Սա նշանակում է, որ դպրոցներում կա ազգային պարի ուսուցման կարիքը: Պարուսուցման կարևորության մասին վկայում են նաև մանկավարժները: |

| 9. Ինչ օգուտներ են ակնկալվում առաջարկի իրականացման արդյունքում: Ինչպես է առաջարկի իրականացումն ազդելու թիրախային շահառուների, այդ թվում՝ մատուցվող ծառայությունների որակի վրա՝ |
|---|
| Պետական բյուջեի մասին մինչև 2023 թվականի իրավական ակտերում որպես առարկայի ներդրման նպատակ նշված է եղել՝ մշակույթի պահպանում, հանրայնացում, պարուսուցման ոլորտի համակարգված գործունեության ապահովում, սովորողների ազգային ոգու ամրապնդում: |
| 10. Ինչ ժամանակահատվածում է նախատեսվում իրականացնել առաջարկը՝ |
| Սկսած 2026 թվականից |
| 11. Ընդհանուր գնահատականներով ինչ ռեսուրսներ (սարքավորումներ, աշխատաժամանակ, ֆինանսական միջոցներ և այլն) կպահանջվեն առաջարկի իրականացման համար՝ |

| # | Նկարագրություն | Գումար (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | | Առնվազն 7.7 մլն. դրամ |
| 2 | | |
| … | | |
| | Ընդամենը՝ | |

| 12. Առաջարկը ենթադրում է արդյոք պետական բյուջեից բացի ֆինանսավորման այլ աղբյուրների ներգրավում: Եթե այո, ապա ներկայացնել առաջարկի համաֆինանսավորման աղբյուրները, ուղղությունները և նախնական ֆինանսական գնահատականները: |
|---|
| |

## N 5 ԱՌԱՋԱՐԿ / ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՅՏԻ/ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| | |
|---|---|
| Կազմակերպության անվանումը՝ | «Մեդիան հանուն կրթության» ՀԿ |
| Հասցեն՝ | Երևան, Աճառյան 26/2 |
| Էլեկտրոնային փոստը՝ | mediaforeducation.ngo@gmail.com |
| /Հեռախոսահամարը՝ | +374 41122272 |
| Պետական մարմնի անվանումը՝ | ԿԳՄՍ նախարարություն |
| Ներկայացման ամսաթիվը՝ | 07.04.2025 |

*«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից*

| |
|---|
| 1. Շահառուների որ խմբի շահերն է ներկայացնում դիտողության/առաջարկի հեղինակ կազմակերպությունը՝ |
| Կազմակերպությունը ներկայացնում է սովորողների խմբի շահերը |
| 2. Ներկայացվածը հանդիսանում է արդյոք այլ ՔՀԿ-ների կամ կազմակերպությունների հետ համատեղ մշակված դիտողություն/առաջարկ: Եթե այո, ապա նշել այն կազմակերպությունները, որոնք մասնակցել են դրա մշակմանը: |
| Այլ մեդիա կազմակերպություններ նույնպես նկատում են դպրոցներում մեդիագրագիտության պրակտիկ դասընթացների կարիք: |
| 3. Դիտողության/առաջարկի վերաբերյալ իրականացվել են արդյոք խորհրդակցություններ հիմնական շահառուների հետ՝ |
| Առաջարկը բխում է շահառուներից ստացած ազդակներից |
| 4. Կազմակերպությունը ենթադրում է արդյոք իր մասնակցությունը առաջարկվող ծրագրի/միջոցառման ֆինանսավորման, իրականացման կամ մոնիտորինգի գործընթացներում: Եթե այո, ապա նշել ենթադրվող մասնակցության ձևը *(լրացվում է միայն նոր նախաձեռնություն հանդիսացող առաջարկի դեպքում):* |
| Կազմակերպությունը կարող է մասնակցել առաջարկվող ծրագրի իրականացմանը |
| 5. Նշել այն ոլորտը, բյուջետային ծրագիրը և միջոցառումը, որին առնչվում է դիտողությունը/առաջարկությունը *(նոր նախաձեռնություն հանդիսացող առաջարկի դեպքում ծրագրի կամ միջոցառման դասիչները կարող են չլրացվել)*՝ |
| Ոլորտը՝ — Կրթություն<br>Ծրագրի դասիչը և անվանումը՝ — 1146 Հանրակրթության ծրագիր<br>Միջոցառման դասիչը և անվանումը՝ — 11002 Հիմնական ընդհանուր հանրակրթություն |
| 6. Նշել ներկայացված դիտողության/ առաջարկի բնույթը՝ |
| Դիտողություն ☐ Առաջարկություն [>] Նոր նախաձեռնություն ☐ |
| 7. Նշել, թե ինչ հարցերի է անդրադառնում ներկայացված դիտողությունը/ առաջարկությունը *(կարելի է միաժամանակ նշել մի քանի տարբերակներ)*՝ |

| | | | |
|---|---|---|---|
| Նպատակներ | | Ծառայության որակ | > |
| Գերակայություններ | > | Ծառայության մատչելիություն | > |
| Շահառուների շրջանակ | > | Ֆինանսական հաշվարկներ | |
| Սպառվող ռեսուրսներ | | Արդյունքային ցուցանիշներ | |
| Իրականացման եղանակներ | > | Վերջնական արդյունքներ | |
| Նոր ծառայություններ | > | Նոր տրանսֆորտներ | |
| Նոր կապիտալ ներդրումներ | > | Արդյունավետություն | > |

Այլ՝ ____________________________________________

**8. Ներկայացնել դիտողության/ առաջարկի բովանդակությունը *(100 բառի շրջանակներում)*՝**

«Մեդիան հանուն կրթության» ՀԿ-ն, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագիրը և «Կրթության՝ մինչև 2030թ. զարգացման պետական ծրագիրը», նաև՝ 2028 թվականի համար սահմանված թիրախները, այդ թվում՝ մեդիագրագիտության մակարդակի բարելավման անհրաժեշտությունը, առաջարկում է պետական բյուջեով նախատեսել միջոցներ, որոնք կստեղծեն պայմաններ, որ լրագրողները դպրոցներում մեդիագրագիտության պրակտիկ դասընթացներ անցկացնեն սովորողների համար՝ միաժամանակ նպաստելով նաև (մասնավորապես՝ հասարակագիտության) ուսուցիչների մեդիահմտությունների զարգացմանը:

**9. Ինչ օգուտներ են ակնկալվում առաջարկի իրականացման արդյունքում: Ինչպես է առաջարկի իրականացումն ազդելու թիրախային շահառուների, այդ թվում՝ մատուցվող ծառայությունների որակի վրա՝**

Երեխաները, դպրոցում յուրացնելով մեդիայի կանոնները, նախ իրենք կունենան պատկերացում մեդիագրագետ քաղաքացու մասին, ապա նաև թե՛ որպես մեդիասպառող, թե՛ որպես մեդիաարտադրող կլինեն կրթված քաղաքացի:
Մեդիագրագիտության պրակտիկ աշխատանքները կնպաստեն ՀՊՉ-ով սահմանված թվային և մեդիա կարողունակության ձևավորմանը. սովորողները կտիրապետեն մեդիագրագիտության կանոններին ու հմտություններին, կպատկերացնեն մեդիայի աշխատանքը և դերը ժողովրդավարական հասարակությունում, կկարողանան կողմնորոշվել տեղեկատվության հոսքերում, գտնել և տարածել տեղեկություններ, քննադատորեն վերլուծել դրանք, գնահատել մեդիայի ազդեցությունը արժեքների, դիրքորոշումների և գործողությունների վրա: Այս հմտություններն իրենց հերթին կնպաստեն քաղաքացիական իրավունքների իրացմանը և ժողովրդավարական գործընթացների մասնակցությանը:

**10. Ինչ ժամանակահատվածում է նախատեսվում իրականացնել առաջարկը՝**

Սկսած 2026 թվականից

**11. Ընդհանուր գնահատականներով ինչ ռեսուրսներ (սարքավորումներ, աշխատաժամանակ, ֆինանսական միջոցներ և այլն) կպահանջվեն առաջարկի իրականացման համար՝**

| # | Նկարագրություն | Գումար (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | | |
| 2 | | |
| … | | |
| | Ընդամենը՝ | |

**12. Առաջարկը ենթադրում է արդյոք պետական բյուջեից բացի ֆինանսավորման այլ աղբյուրների ներգրավում: Եթե այո, ապա ներկայացնել առաջարկի համաֆինանսավորման աղբյուրները, ուղղությունները և նախնական ֆինանսական գնահատականները:**

*«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից*

ՀԱՎԵԼՎԱԾ 3.

**«Լուսաստղ» ՀԿ-ի համընդհանուր ներառական կրթության ոլորտում ՀՀ 2026-2028 թթ. ՄԺԾԾ հայտերի և 2026 թվականի բյուջետային հայտերի վերաբերյալ ներկայացված առաջարկությունները**

## ԱՌԱՋԱՐԿ / ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ
## ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՅՏԻ/ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| | |
|---|---|
| Կազմակերպության անվանումը՝ | «Լուսաստղ» ՀԿ |
| Հասցեն՝ | Տ. Մեծի 16, Վանաձոր, Լոռի, ՀՀ |
| Էլեկտրոնային փոստը՝ | lusastghhk@gmail.com |
| Հեռախոսահամարը՝ | 093310608 |
| Պետական մարմնի անվանումը՝ | ԿԳՄՍՆ |
| Ներկայացման ամսաթիվը՝ | 14.04.2025թ |

| |
|---|
| 1. Շահառուների որ խմբի շահերն է ներկայացնում դիտողության/առաջարկի հեղինակ կազմակերպությունը՝ |
| Հաշմանդամություն ունեցող անձանց շահերը, ներառյալ հաշմանդամություն ունեցող երեխաների ներառական կրթության իրավունքը |
| 2. Ներկայացվածը հանդիսանում է արդյոք այլ ՔՀԿ-ների կամ կազմակերպությունների հետ համատեղ մշակված դիտողություն/առաջարկ: Եթե այո, ապա նշել այն կազմակերպությունները, որոնք մասնակցել են դրա մշակմանը: |
| Առաջարկությունների փաթեթը մշակվել է «Լուսաստղ» ՀԿ-ի կողմից: |
| 3. Դիտողության/առաջարկի վերաբերյալ իրականացվել են արդյոք խորհրդակցություններ հիմնական շահառուների հետ՝ |
| Խորհրդակցություններ են իրականացվել հիմնական շահառուների, մասնավորապես՝ հաշմանդամություն ունեցող/ԿԱՊԿՈՒ մանկապարտեզահասակ և դպրոցահասակ երեխաների ծնողական համայնքի հետ՝ ֆոկուս խմբային քննարկումների միջոցով:<br>Ի լրումն, խորացված հարցումներ են անցկացվել Լոռու և Շիրակի մարզերի ընտրված դպրոցների տնօրենների շրջանում՝ խնդրո առարկա թեմայի շուրջ: |
| 4. Կազմակերպությունը ենթադրում է արդյոք իր մասնակցությունը առաջարկվող ծրագրի/միջոցառման ֆինանսավորման, իրականացման կամ մոնիտորինգի գործընթացներում: Եթե այո, ապա նշել ենթադրվող մասնակցության ձևը *(լրացվում է միայն նոր նախաձեռնություն հանդիսացող առաջարկի դեպքում):* |
| «Լուսաստղ» կազմակերպությունը հանդիսանալով հասարակական ոլորտի կառույց կարող է առաջարկել մոնիտորինգի գործընթացում իր մասնակցությունը՝ արհեստավարժ աշխատակազմի մասնակցությամբ: |

| | | | |
|---|---|---|---|
| 5. Նշել այն ոլորտը, բյուջետային ծրագիրը և միջոցառումը, որին առնչվում է դիտողությունը/առաջարկությունը *(նոր նախաձեռնություն հանդիսացող առաջարկի դեպքում ծրագրի կամ միջոցառման դասիչները կարող են չլրացվել)*՝ | | | |
| Ոլորտը՝ | Կրթություն | | |
| Ծրագրի դասիչը և անվանումը՝ | 1193/ Համընդհանուր ներառական կրթության ներդրում | | |
| Միջոցառման դասիչը և անվանումը՝ | | | |
| 6. Նշել ներկայացված դիտողության/ առաջարկի բնույթը՝ | | | |
| Դիտողություն ☐ | Առաջարկություն ☑ | Նոր նախաձեռնություն ☐ | |
| 7. Նշել, թե ինչ հարցերի է անդրադառնում ներկայացված դիտողությունը/ առաջարկությունը *(կարելի է միաժամանակ նշել մի քանի տարբերակներ)*՝ | | | |
| Նպատակներ | ☐ | Ծառայության որակ | ☑ |
| Գերակայություններ | ☐ | Ծառայության մատչելիություն | ☑ |
| Շահառուների շրջանակ | ☑ | Ֆինանսական հաշվարկներ | ☐ |
| Սպառվող ռեսուրսներ | ☐ | Արդյունքային ցուցանիշներ | ☐ |
| Իրականացման եղանակներ | ☑ | Վերջնական արդյունքներ | ☐ |
| Նոր ծառայություններ | ☑ | Նոր տրանսֆորտներ | ☐ |
| Նոր կապիտալ ներդրումներ | ☐ | Արդյունավետություն | ☑ |
| Այլ՝ | | | |
| 8. Ներկայացնել դիտողության/ առաջարկի բովանդակությունը *(100 բառի շրջանակներում)*՝ | | | |

**Հիմնախնդիր 1.**
Ներկայումս ներառական կրթության ոլորտում բացակայում է արդյունավետ բողոքարկման և արձագանքման մեխանիզմ, որի միջոցով երեխաները, ծնողները, խնամակալները և ուսուցիչները կարող են բարձրաձայնել խնդիրներ, խախտումներ կամ բացթողումներ:

**Առաջարկ 1.1.**
Ստեղծել մոնիթորինգային հստակ մեխանիզմներ՝ ներառական կրթության որակի, հասանելիության ու արդյունավետության գնահատման համար:

Առաջարկ 1.2.
Հիմնել բողոքարկման և արձագանքման թափանցիկ հարթակներ՝ երեխաների, ծնողների, խնամակալների և ուսուցիչների համար:

**Հիմնախնդիր 2.**
Ներառական կրթության արդյունավետ իրականացումն անմիջականորեն կախված է այն աջակցությունից, որը երեխան ստանում է դպրոցում՝ դասապրոցեսին լիարժեք մասնակցելու համար: Շատ դեպքերում այդ աջակցությունը չի կարող լիարժեք ապահովվել միայն ուսուցչի կողմից՝ հաշվի առնելով դասարանի ծանրաբեռնվածությունը և երեխայի անհատական կարիքները: Բազմաթիվ երեխաներ ունեն ֆիզիկական, զգայական, վարքային կամ սովորելու դժվարություններ, և նրանք անհատական աջակցություն ստանալու կարիք ունեն՝ շարժվելու, հաղորդակցվելու, առաջադրանքները հասկանալու կամ կենտրոնանալու համար: Ուսուցիչները հաճախ չեն կարող միաժամանակ բավարար ուշադրություն հատկացնել բոլոր սովորողներին և իրականացնել ԱՈՒՊ-ի պահանջները: Ծնողները հաճախ ստիպված են իրենք դառնալ երեխայի «օգնական», ինչը խոչընդոտում է նրանց աշխատանքի հնարավորությանը և խախտում է երեխայի ինքնուրույնության զարգացման իրավունքը: Հետևաբար, դպրոցներում խիստ անհրաժեշտ են անձնական օգնականների համակարգի զարգացումը, որը, ոչ միայն կրթական իրավունքի երաշխիք է, այլ նաև նպաստում է՝ ներառական միջավայրի կայացմանը, ուսուցիչների  բեռնաթափմանը, երեխայի սոցիալականացմանն ու զարգացմանը:

Առաջարկ 2.1
Անձնական օգնականի հաստիքի ներդնում կրթական հաստատություններում: Անձնական օգնականը կաջակցի երեխային՝ դասերի ընթացքում՝ հասկանալու, աշխատելու, գրելու, ընթերցելու հարցերում: Դասից դուրս՝ տարածքում տեղաշարժվելու, կազմակերպվելու, հոգատար միջավայր ունենալու, հաճախ նաև՝ շփման, հուզական հարմարավետության հարցերում: Այն չի փոխարինում ուսուցչին, այլ օգնում է ապահովել երեխայի անհատական ուսումնական պլանի (ԱՈՒՊ) իրագործումը:

**Հիմնախնդիր 3.**
Ներառական կրթության համակարգում առկա է ֆինանսական ռեսուրսների ոչ համաչափ բաշխում, որն ի հայտ է գալիս հատկապես՝ ՏՄԱԿ-ների և հանրակրթական դպրոցների համեմատության մեջ: Դպրոցները, որոնք հանդիսանում են երեխաների ուսուցման և ներառման իրական տարածք, ունեն գերծանրաբեռնված ուսուցիչներ, մեծ թվով ԱՈՒՊ ունեցող երեխաներ, չհարմարեցված միջավայր, հատուկ մասնագետների և ուսումնական նյութերի պակաս: Միևնույն ժամանակ, նրանց ֆինանսական հնարավորությունները խիստ սահմանափակ են, ինչը խոչընդոտում է ներառական կրթության արդյունավետ իրականացումը: ՏՄԱԿ-ները, որոնք ի սկզբանե նախատեսված են որպես աջակցող կառույցներ՝ (գործողություն՝ երեխայի կարիքների ախտորոշում, ԱՈՒՊ մշակում, մեթոդական աջակցություն), հաճախ ունեն ավելի լայն բյուջե, մեծ վարչական ծախսեր (վարձ, սպասարկում, տեխնիկա), աշխատակիցների համեմատաբար քիչ ծանրաբեռնվածություն, և փակ գործառույթներ, որոնք սահմանափակվում են գնահատմամբ, ոչ՝ երկարաժամկետ ուղեկցմամբ: Այս իրավիճակը հանգեցնում է նրան, որ՝ ռեսուրսները գնում են աջակցող շերտին, այլ ոչ առաջնային՝ կրթական գործընթացին, դպրոցները մնում են առանց բավարար

<table>
<tr><td>միջոցների՝ ապահովելու իրական ներառական կրթություն, համակարգում չի նկատվում հաշվետվողականություն կամ արդյունավետության չափում՝ ռեսուրսների համատեքստում:<br><br>Առաջարկ 3.1<br>ՏՄԱԿ-ների բյուջեի վերանայում և վերաբաշխում՝ ըստ հետևյալ սկզբունքի՝ ՏՄԱԿ-ների վարչական ծախսերը կրճատել, ապահովելով հիմնական ֆունկցիայի իրականացումը: Ազատված միջոցներն ուղղել՝<br>✓ Դպրոցներում անձնական օգնականների հաստիքի ներդրմանը,<br>✓ ուսուցիչների հավելավճարներին ներառական կրթության ապահովման համար:</td></tr>
<tr><td>9. Ինչ օգուտներ են ակնկալվում առաջարկի իրականացման արդյունքում: Ինչպես է առաջարկի իրականացումն ազդելու թիրախային շահառուների, այդ թվում՝ մատուցվող ծառայությունների որակի վրա՝</td></tr>
<tr><td>1. Ներառական կրթության համակարգում ընդգրկված անձինք (աշակերտ, ծնող, ուսուցիչ, խնամակալ) կունենան հնարավորություն՝ բարձրաձայնելու խնդիրները, խախտումները կամ բացթողումները՝ առանց վախի ու բարդ գործընթացների: Կստեղծվի հետադարձ կապի ուղի, որը թույլ կտա քաղաքականություն մշակողներին տեսնել իրական խնդիրները ոլորտում: Այս մեխանիզմն ի վերջո կդառնա քաղաքացիական վերահսկողության գործիք, որը թույլ կտա շահառուներին ներգրավվել որոշումների ընդունման մեջ:<br><br>2. Անձնական օգնականը իրապես կնպաստի հատուկ կարիքներ ունեցող երեխայի իրական մասնակցությանը դասապրոցեսին: Կթեթևացնի ուսուցչի ծանրաբեռնվածությունը, որ դասավանդի ամբողջ դասարանին առանց մեկ երեխայի կարիքներին ամբողջությամբ կենտրոնանալու անհրաժեշտության: Կբարձրացնի ներառական կրթության գործնական արդյունավետությունը, ոչ թե միայն գաղափարականը:<br><br>3. ՏՄԱԿ-ների բյուջեի վերանայումը և միջոցների վերաբաշխումը դպրոցներին թույլ կտա ուղղել ռեսուրսները այնտեղ, որտեղ իրականացվում է իրական ներառական կրթություն:<br>Սա կապահովի անձնական օգնականների հաստիքների ստեղծում, ուսուցիչների վերապատրաստում ու հավելավճարներ, ինչպես նաև՝ ուսումնական նյութերի մատչելիություն:<br>Արդյունքում՝ կբարելավվի ներառական կրթության որակը, ուսուցիչների մոտիվացիան, և երեխաների իրական մասնակցությունը դասապրոցեսին: Միաժամանակ կբարձրանա ֆինանսական արդարությունը և համակարգի թափանցիկությունը:</td></tr>
<tr><td>10. Ինչ ժամանակահատվածում է նախատեսվում իրականացնել առաջարկը՝</td></tr>
<tr><td>Ցանկալի է առաջարկները ներառել 2026-2028թթ ՄԺԾԾ -ում:</td></tr>
</table>

| 11. Ընդհանուր գնահատականներով ինչ ռեսուրսներ (սարքավորումներ, աշխատաժամանակ, ֆինանսական միջոցներ և այլն) կպահանջվեն առաջարկի իրականացման համար՝ | | |
|---|---|---|
| # | Նկարագրություն | Գումար (ՀՀ դրամ) |
| 1 | Բողոքարկման և արձագանքման համակարգի ներդրման համար անհրաժեշտ են թվային հարթակի մշակում, աշխատակազմի ապահովում (թեժ գծի օպերատորներ, տվյալների վերլուծաբան), տեխնիկական սարքավորումներ, վերապատրաստումներ և իրազեկման արշավներ: Այս ներդրումը կնպաստի թափանցիկության բարձրացմանը, շահառուների իրավունքների պաշտպանությանը և քաղաքական պատասխանատվության ձևավորմանը: | 10 մլն դրամ |
| 2 | Անձնական օգնականների հաստիքների ներդրման համար պահանջվում է աշխատաժամանակի հաշվարկված կազմակերպում, վերապատրաստման կարճաժամկետ ծրագրեր, ինչպես նաև կայուն ֆինանսական միջոցներ՝ աշխատավարձերի համար: | 20-30 մլն դրամ / նախնական |
| | Ընդամենը՝ | |

| 12. Առաջարկը ենթադրում է արդյոք պետական բյուջեից բացի ֆինանսավորման այլ աղբյուրների ներգրավում: Եթե այո, ապա ներկայացնել առաջարկի համաֆինանսավորման աղբյուրները, ուղղությունները և նախնական ֆինանսական գնահատականները: |
|---|
| Ոչ |